

ԿԱՐԾԻՔ

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի նախագծի վերաբերյալ

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի նախագծի¹ վերաբերյալ նկատառումները հանգում են հետևյալին.

1. Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ՀՀ տարածքում, անկախ վարչական իրավախախտման կատարման վայրից, անձը ենթարկվում է վարչական պատասխանատվության սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

Դրույթի տառացի մեկնաբանությունից ստացվում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքն, ընդհանուր կանոնի համաձայն, տարածվում է, անկախ կատարման վայրից, բոլոր իրավախախտումների վրա, եթե անձը գտնվում է ՀՀ-ում: Իսկ հոդվածի հաջորդող մասերում սահմանվում են դրա մասնակի դրսևորումները:

Գտնում ենք, որ սույն ձևակերպումը տարըմբռնման տեղիք է տալիս: Կարծես թե հոդվածը պետք է նախ կարգավորի սույն օրենքի գործողության տարածքային սկզբունքը, այսինքն՝ դրա տարածումը ՀՀ-ում կատարված վարչական իրավախախտումների վրա՝ միաժամանակ կարգավորելով այն հարցը, թե որ իրավախախտումն է համարվում ՀՀ-ում կատարված: Այնուհետ, Նախագծով պետք է ամրագրվեր տարածքային սկզբունքից բառառությունները:

2. Նախագծի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի գործողությունը տարածության մեջ և ըստ անձանց շրջանակի» 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ սահմաններից դուրս ՀՀ դրոշի տակ օրինական կարգով գտնվող կամ ՀՀ տարբերանշանը կրող *օդանավի կամ օդային* այլ սարքի վրա վարչական իրավախախտում կատարած անձը, անկախ դրանց գտնվելու վայրից, ենթակա է վարչական պատասխանատվության սույն օրենսգրքին համապատասխան, եթե միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

Վերոգրյալից հետևում է, որ Նախագծի իրավադրույթները չեն կարող տարածվել ՀՀ սահմաններից դուրս ՀՀ դրոշի տակ օրինական կարգով գտնվող կամ ՀՀ տարբերանշանը կրող նավի վրա:

Մինչդեռ, օրինակ՝ ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի քրեական օրենքի գործողությունը տարածվում է նաև ՀՀ դրոշի տակ գտնվող կամ ՀՀ տարբերանշանը կրող նավի վրա հանցանք կատարած անձի վրա, անկախ դրա գտնվելու վայրից:

¹Այսուհետ՝ Նախագիծ

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել այնպիսի դրույթով, ըստ որի՝ Նախագծի համապատասխան նորմերը կտարածվեն նաև ՀՀ սահմաններից դուրս ՀՀ դրոշի տակ օրինական կարգով գտնվող կամ ՀՀ տարբերանշանը կրող նավի վրա վարչական իրավախախտում կատարած անձի վրա, անկախ դրա գտնվելու վայրից:

3. Նախագծի 4-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է, որ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող կամ վերացնող, ինչպես նաև անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը վարչական իրավախախտում կատարած անձի վրա, եթե անձի նկատմամբ նշանակված վարչական տույժը մինչև տվյալ օրենքի ուժի մեջ մտնելը չի կատարվել:

Նման ձևակերպումը վիճահարույց է այնքանով, որքանով հնարավոր չէ միանշանակ պնդել, որ օրենքը մեղմացման առումով կունենա հետադարձ ուժ նաև այն դեպքերում, երբ անձի նկատմամբ վարչական տույժի կատարումն ընթացիկ փուլում է (խոսքն այնպիսի վարչական տույժերի մասին է, որոնք ենթադրում են կատարման որոշակի տևական ժամանակահատված, օրինակ՝ հանրագուտ աշխատանքը կամ հատուկ իրավունքից զրկումը):

Ուստի, առաջարկում ենք հստակեցնել Նախագծի 4-րդ հոդվածի 5-րդ մասը՝ հաշվի առնելով անձի նկատմամբ վարչական տույժի կատարումն ընթացիկ փուլում գտնվելու հանգամանքը:

4. Նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմնին արգելվում է վարչական տույժի տարբեր տեսակներ կամ չափեր նշանակել միատեսակ փաստական հանգամանքներում վարչական իրավախախտում կատարած անձանց նկատմամբ: Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ իրականացնող մարմինը պարտավոր է անհատական մոտեցում ցուցաբերել էապես տարբեր փաստական հանգամանքներում վարչական իրավախախտում կատարած անձանց նկատմամբ:

Վիճահարույց է այն, թե արդյոք անհատական մոտեցում ցուցաբերելու պարտականությունը պետք է սահմանափակվի փաստական հանգամանքների էապես տարբեր լինելու դեպքում: Գտնում ենք, որ անհատականացման սկզբունքը ենթադրում է հենց գործի բոլոր առանձնահատկությունների հաշվառում, ուստի առաջարկում ենք վերախմբագրել վերոնշյալ հոդվածի 3-րդ մասը:

5. Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ անձը չի կարող կրկին ենթարկվել վարչական պատասխանատվության նույն արարքի համար: Միևնույն ժամանակ, սույն դրույթով նախատեսվում է, որ նույն արարք չի համարվում այն վարչական իրավախախտումը,

որի կրկին կատարման համար սույն օրենսգրքի հատուկ մասով նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Վերոգրյալից պարզ չէ 2-րդ նախադասությամբ սահմանված կարգավորման ամրագրման անհրաժեշտությունն այն դեպքում, երբ միևնույն արարքի կրկին կատարումը առանձին իրավախախտում է, որը թեև իր բնույթով նույնն է առաջին անգամ կատարված արարքի հետ, բայց ևայնպես համարվում է նոր իրավախախտում, քանի որ իրավախախտում կատարած անձը արդեն ավարտված առաջին իրավախախտումից հետո կատարում է երկրորդ՝ նման իրավախախտումը, որը, սակայն, ուղղակիորեն փոխկապակցված չէ առաջինի հետ:

Ուստի, գտնում ենք, որ անհրաժեշտ է քննարկել Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությամբ ամրագրված կարգավորման նպատակահարմարությունը:

6. Նախագծի 12-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված է, որ շարունակվող վարչական իրավախախտումը միասնական դիտավորությամբ միավորված երկու և ավելի նույնական արարքների համակցությունն է:

Սակայն դրույթի ձևակերպումից միանշանակ պարզ չէ, թե նույնական արարքների (ենթադրվում է զանցակազմ պարունակող) դեպքում անձի արարքն ի վերջո դիտվում է որպես մեկ իրավախախտում, թե դրանց համակցություն: Խնդրի հստակեցման կարևորությունը պայմանավորված է թե՛ իրավախախտումը հանցագործությունից տարանջատելու (մասնավորապես այն դեպքերում, երբ նման տարանջատման չափանիշը պատճառված վնասի չափն է), թե՛ վարչական սանկցիայի նշանակման կիրառելի կանոնների որոշման տեսանկյունից:

7. Նախագծի 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ իրավաբանական անձը ենթակա է վարչական պատասխանատվության, եթե վարչական իրավախախտումը կատարվել է ի շահ կամ ի օգուտ տվյալ իրավաբանական անձի՝ այն ֆիզիկական անձի կողմից, որը՝ տվյալ իրավաբանական անձի աշխատակիցն է կամ պաշտոնատար անձը, որի վրա օրենքով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ կամ իրավաբանական անձի այլ ակտով կամ աշխատանքային պայմանագրով դրված են կոնկրետ պարտականություններ, որոնց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում իրականացվել է տվյալ վարչական իրավախախտումը:

Վերոգրյալ կարգավորման մեջ վիճահարույց է այն, որ բացակայում է իրավախախտման կատարման կապը ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև: Այսինքն, եթե նույնիսկ ֆիզիկական անձը գործում է ի շահ կամ ի օգուտ իրավաբանական անձի, սակայն վերջինս որևէ կերպ առնչություն չունի կատարված իրավախախտման կամ այն կանխելու հետ միևնույնն է կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության:

Նշվածի համատեքստում հատկանշական է ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծը, որը որպես նորամուծություն նախատեսում է իրավաբանական անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորություն: Տվյալ նախագծի «Իրավաբանական անձի քրեական պատասխանատվության հիմքը» վերտառությամբ 137-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանվում է, որ իրավաբանական անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե հանցանքը կատարվել է իրավաբանական անձի ծառայողի կողմից՝ կապված իր ծառայողական գործունեության հետ, եթե հանցանքի կատարումը հնարավոր է դարձել տվյալ կազմակերպությունում ներքին վերահսկողության, իր աշխատակիցների կողմից հանցանքների կատարումը կանխարգելելու մեխանիզմների անկատարության հետևանքով:

Վերլուծելով տվյալ դրույթը պարզ է դառնում, որ իրավաբանական անձին հնարավոր է քրեական պատասխանատվության ենթարկել իր ծառայողի գործողությունների (անգործության) համար միայն այն դեպքում, երբ ֆիզիկական անձի կողմից հանցանքի կատարումը հնարավոր է դարձել միայն իրավաբանական անձի կողմից կազմակերպությունում ներքին վերահսկողության, իր աշխատակիցների կողմից հանցանքների կատարումը կանխարգելելու մեխանիզմների անկատարության հետևանքով: Այսինքն, այս դեպքում առկա է ուղիղ կապ ֆիզիկական անձի կողմից կատարված արարքի և իրավաբանական անձի անգործության կամ իր պարտականությունների ոչ պատշաճ կատարման հետ, ինչն էլ հանգեցրել քրեորեն պատժելի արարքի կատարման հնարավորությանը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծի 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը խմբագրել այնպես, որ հստակ արտացոլվի իրավաբանական անձի անմիջական կապը ֆիզիկական անձի կողմից կատարված իրավախախտման հետ:

8. Նախագծի 18-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ զանցակցություն է համարվում երկու կամ ավելի ֆիզիկական անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը դիտավորյալ վարչական իրավախախտմանը:

Սակայն նման կարգավորման պարագայում պարզ չէ, թե ինչպես է որակվելու երկու կամ ավելի իրավաբանական անձանց դիտավորյալ մասնակցությունը վարչական իրավախախտման կատարմանը, արդյոք անհրաժեշտ չէ այս դեպքում սահմանել նաև իրավաբանական անձանց զանցակցության առանձնահատկությունները:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի «Իրավաբանական անձանց հանցակցությունը» վերտառությամբ 140-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է, որ իրավաբանական անձը կարող է մասնակցել այլ իրավաբանական անձի կողմից հանցանքի կատարմանը որպես կատարող, կազմակերպիչ կամ օժանդակող:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է քննարկել Նախագծում իրավաբանական անձանց հանցակցությունը սահմանելու նպատակահարմարության հարցը:

9. Նախագծի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կատարող է այն անձը, ով անմիջականորեն կատարել է վարչական իրավախախտումը կամ դրա կատարմանն անմիջականորեն մասնակցել է այլ անձանց (համակատարողների) հետ համատեղ, ինչպես նաև վարչական իրավախախտումը կատարել է այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր սույն օրենսգրքի համաձայն ենթակա չեն վարչական պատասխանատվության կամ վարչական իրավախախտումը կատարել են անզգուշությամբ:

Վերոգրյալ իրավադրույթում պարզ չէ այն դեպքը, երբ, օրինակ, պաշտոնատար անձի կողմից իրավախախտմանը ներգրավվում է հատուկ սուբյեկտի հատկանիշներ չունեցող անձը: Այսինքն՝ իրավախախտումը փաստացի կատարվում է անձի կողմից, որը տվյալ զանցակազմի սուբյեկտ չէ, սակայն վարչական պատասխանատվության այնուամենայնիվ ենթակա է:

Այս առումով, առավել հստակ է թվում այնպիսի ձևակերպումը, համաձայն որի՝ միջնորդավորված կատարում է նաև այն անձի միջոցով վարչական իրավախախտման կատարումը, որը ենթակա չէ վարչական պատասխանատվության տվյալ զանցակազմի համար:

10. Նախագծի 19-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանվում է, որ անձը ենթակա չէ վարչական պատասխանատվության հատուկ սուբյեկտով վարչական իրավախախտման համար, եթե անձը՝ ոչ իրավաչափ է հատուկ սուբյեկտի կարգավիճակ ստացել և կատարել է հատուկ սուբյեկտով վարչական իրավախախտում:

Տվյալ կարգավորման պարագայում քննարկման կարիք ունի այն, թե արդյոք արդարացված է անձին վարչական պատասխանատվությունից ազատել նաև այն դեպքերում, երբ հատուկ սուբյեկտի կարգավիճակ վերջինս ձեռք է բերել իր ապօրինի գործողությունների արդյունքում, և իր կատարածը որևէ այլ հոդվածով հնարավոր չէ որակել:

Այս դեպքում, ենթադրվում է, որ վերջինս պատասխանատվության պետք է ենթարկվի հատուկ սուբյեկտով զանցակազմի փորձի համար:

11. Նախագծի «Մեղքը» վերտառությամբ 5-րդ գլխի 20-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ սույն օրենսգրքով սահմանված վարչական իրավախախտում կատարած անձն արարքի հակաիրավականությունը չգիտակցելու հիմքով ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ նրա անունից հանդես եկող անձը կամ պաշտոնատար անձը գրավոր ձևով սխալ տեղեկություն են տվել կամ սխալ են մեկնաբանել իրավական նորմը կամ իրավական ակտը պատշաճ կարգով չի տրամադրվել իրեն կամ այլ օբյեկտիվ հանգամանքների ուժով անձը հնարավորություն չի ունեցել գիտակցելու իր արարքի հակաիրավականությունը:

Նշվածն իրենից ներկայացնում է սխալը արարքի իրավական գնահատման հարցում, այսինքն՝ իրավաբանական սխալի ինստիտուտը: Սակայն պարզ չէ, թե Նախագծում ինչու

սահմանված չէ սխալը արարքի փաստական հանգամանքների մեջ՝ փաստական սխալի ինստիտուտը: Այնինչ, տեսության մեջ սխալի ինստիտուտը ընդգրկում է և՛ իրավաբանական սխալը, և՛ փաստական սխալը:

Ըստ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի նախագծի դեռևս չլրամշակված տարբերակի սահմանված էր ինչպես սխալը արարքի իրավական գնահատման հարցում (22-րդ հոդված), այնպես էլ՝ սխալը արարքի փաստական հանգամանքների մեջ (23-րդ հոդված):

Ի տարբերություն Նախագծի ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի 30-րդ հոդվածում ամրագրված է փաստական սխալի ինստիտուտը:

Իրավաբանական կամ փաստական սխալի ինստիտուտը ուղիղ կապի մեջ է գտնվում ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի հետ: Այդուհանդերձ, այս հարցը ներկայումս որևէ օրենսդրական լուծում չի ստացել: Մինչդեռ գրեթե բոլոր ժողովրդավարական պետությունների քրեական² և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրություններում³ սխալի ինստիտուտը մանրամասն կարգավորվում է, ինչը նպաստում է օրենքի միասնական կիրառմանը և ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի ապահովմանը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է Նախագծում նախատեսել իրավաբանական և փաստական սխալի ինստիտուտները ու սահմանել դրանց դեպքում անձի վարչական պատասխանատվության առանձնահատկությունները: Միաժամանակ, գտնում ենք, որ Նախագծում պետք է ամրագրվեն նաև փաստական սխալի տարբեր իրավիճակները և դրանց դեպքում արարքի որակման առանձնահատկությունները:

12. Նախագծի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրօգուտ աշխատանքները վարչական իրավախախտում կատարած անձի կողմից ուսումնառությունից կամ աշխատանքից ազատ ժամանակահատվածում հանրության համար օգտակար բնույթ կրող, չվարձատրվող, մարդու արժանապատվությանը չնվաստացնող աշխատանքների կատարումն է իրավասու մարմնի կողմից որոշված վայրում:

Նշված կարգավորման կապակցությամբ դեռևս Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի նախագծի չլրամշակված տարբերակի վերաբերյալ մեր կողմից ներկայացված կարծիքում վիճահարույց է գնահատվել հոդվածում ամրագրված «*իրավասու մարմնի կողմից որոշված վայրում*» ձևակերպումը, քանի որ այն որևէ կերպ չի

²Գերմանիայի քրեական օրենսգիրք, պարագրաֆ 16 և 17 (Strafgesetzbuch (StGB), <https://www.gesetze-im-internet.de/bundesrecht/stgb/gesamt.pdf>), Ավստրիայի քրեական օրենսգիրք, պարագրաֆ 8 և 9 (<https://www.ris.bka.gv.at/GeltendeFassung.wxe?Abfrage=Bundesnormen&Gesetzesnummer=10002296>), Շվեյցարիայի քրեական օրենսգիրք, պարագրաֆ 13 և 21 (Schweizerisches Strafgesetzbuch, <https://www.admin.ch/opc/de/classified-compilation/19370083/index.html>)

³Տե՛ս օրինակ՝ Գերմանիայի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենքը, պարագրաֆ 11 (Gesetz über Ordnungswidrigkeiten (OWiG), http://www.gesetze-im-internet.de/bundesrecht/owig_1968/gesamt.pdf),

սահմանափակում իրավասու մարմնին համապատասխան վայրը ընտրելիս: Սակայն, Նախագծում տվյալ ձևակերպումը պահպանվել է:

Գտնում ենք, որ որպես հնարավոր չարաշահումների հակակշիռ, ինչպես նաև հանրագուտ աշխատանք կատարող անձանց իրավունքների պաշտպանության միջոց, իրավասու մարմնի կողմից հանրագուտ աշխատանքների վայրը որոշելիս անհրաժեշտ է դիտարկել նաև մի շարք հանգամանքներ, ինչպիսիք են, օրինակ, վարչական իրավախախտում կատարած անձի մշտական բնակության վայրը, բնակության վայրից մինչև հանրագուտ աշխատանքները կատարելու վայրը հասնելու հնարավորությունը, ընտանիքի միակ կերակրող լինելը և այլն:

Ուստի, առաջարկում ենք կրկին քննարկել Նախագծի 43-րդ հոդվածի 1-ին մասում հստակ չափորոշիչների սահմանման հնարավորության հարցը, որոնք թույլ կտան իրավասու մարմնին, բոլոր հանգամանքները հաշվի առնելով, որոշելու հանրագուտ աշխատանքների կատարման վայրը:

13. Նախագծի 55-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանվում է, որ 3 ժամից ավելի տևողությամբ ժամկետով, բայց ոչ ավել քան 48 ժամը, կարող են ձերբակալվել ոչ սթափ վիճակում գտնվող անձինք՝ մինչև սթափվելը:

Նշված ձևակերպումը վիճահարույց է, քանի որ չի հստակեցնում, թե ինչպես է որոշվում անձի սթափ համարվելու պահը, ինչն անհրաժեշտ է վերջինիս 3 ժամից ավել անազատության մեջ պահելուց խուսափելու համար:

Հատկանշական է, որ ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի (Դաշնագիր) 9-րդ հոդվածի համաձայն՝ «(...) Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական ձերբակալման կամ կամայականորեն պահվել կալանքի տակ: Ոչ ոք չպետք է զրկվի ազատությունից այլ կերպ, քան այնպիսի հիմքերով և այնպիսի ընթացակարգերին համապատասխան, որոնք սահմանված են օրենքով:»:

Միաժամանակ, Դաշնագրի թիվ 35 Ընդհանուր մեկնաբանության (General Comment No. 35) մեջ 9-րդ հոդվածի նշված հատվածը պարզաբանվում է հետևյալ կերպ. «Հանձնաժողովը գտնում է, որ այն դեպքերում, երբ մասնակից պետությունները ձերբակալումը կիրառում են անվտանգության նկատառումներից ելնելով (երբեմն կոչվում է վարչական ձերբակալում (...)), որը չի հետապնդում քրեական պատասխանատվության ենթարկելն ապահովելու նպատակ, որ նման պահումը իրենից ներկայացնում է ազատության կամայական սահմանափակման լուրջ վտանգ: Մասնակից պետությունները պետք է ցույց տան, որ պահումը չի տևում ավելի երկար քան անհրաժեշտ է, որ հնարավոր պահման ընդհանուր տևողությունը սահմանափակ է և որ, բոլոր դեպքերում, ամբողջովին ապահովում են հոդված 9-ով նախատեսված երաշխիքները:»:

Այսպիսով, պարզ չէ, թե Նախագծի կարգավորումների պարագայում ձերբակալվածին ինչպիսի բժշկական օգնություն է ցուցաբերվում, որտեղ պետք է ձերբակալված անձը պահվի

մինչ սթափվելը, արդյոք այդ ընթացքում թույլատրվում է նրան հարցաքննել, արդյոք հնարավոր է կիրառել միջոցներ նրան հնարավորինս արագ սթափեցնելու համար, և եթե այո, ապա՝ ինչ միջոցներ, արդյոք արձանագրվում է սթափվելու ժամը, ըրպեն, և այլն:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծի 55-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում կատարել համապատասխան լրացումներ՝ անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի իրականացման վերը թվարկված և այլ երաշխիքները ապահովելու նպատակով:

14. Նախագծում ամրագրված չեն երաշխիքներ վարչական վարույթ իրականացնող մարմնի կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի ընթացքում անչափահասի կարծիքը հաշվի առնելու համար (օրինակ՝ Նախագծի 68-րդ հոդվածի 2-րդ մաս):

Մինչդեռ, ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի⁴ 12-րդ հոդվածի համաձայն իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար իրեն վերաբերող բոլոր դեպքերում ապահովվում է իր կարծիքն արտահայտելու իրավունք՝ վերջինիս տարիքին և հասունությանը համապատասխան: Այդ նպատակով երեխային, մասնավորապես, հնարավորություն է տրվում իրեն վերաբերող ցանկացած դատական կամ վարչական քննության ժամանակ ներպետական օրենսդրության դատավարական նորմերով նախատեսված կարգով լսված լինել թե՛ անմիջականորեն, թե՛ իր ներկայացուցչի կամ համապատասխան մարմնի միջոցով:

Ավելին, ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի թիվ 14 Ընդհանուր մեկնաբանության (2013) «Երեխայի լավագույն շահերը գնահատելիս հաշվի առնվող հանգամանքները» վերնագրով 1-ին կետի §53-ի համաձայն՝ ցանկացած որոշում, որտեղ հաշվի չի առնվում երեխայի կարծիքը կամ պատշաճ կշիռ չի տրվում այդ կարծիքին, հաշվի առնելով երեխայի տարիքը և հասունությունը, չի հարգում իրենց լավագույն շահերի որոշման գործընթացի վրա ազդելու երեխայի հնարավորությունը:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից մշակված «Անչափահասների արդարադատության օրենսդրության բարեփոխման ուղեցույց»-ում կարևորվում է, որ երեխայի լսված լինելու իրավունքը պետք է հստակորեն սահմանվի օրենսդրության մեջ⁵:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծով ամրագրել, որ վարչական վարույթ իրականացնող մարմինը վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթին որպես համապատասխան տուժողի կամ կասկածյալի օրինական ներկայացուցիչներ մասնակցելը թույլատրելու, ընտրելու և այլ հարցերի լուծման ընթացքում հաշվի է առնում անչափահասի կարծիքը:

⁴Այսուհետ՝ Կոնվենցիա

⁵ http://www.unicef.org/policyanalysis/files/Juvenile_justice_16052011_final.pdf

15. Նախագծի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը նախատեսում է, որ որպես վկա չի կարող հանդես գալ նաև մարդու իրավունքների պաշտպանը՝ իր պարտականությունները կատարելու կապակցությամբ իրեն հայտնի դարձած հանգամանքների մասին, բացառությամբ այն դեպքերի, երբ վերջինս համաձայն է ցուցմունք տալ՝ ի օգուտ կասկածյալի:

Պետք է նշել, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի նախագծի⁶ 4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ պաշտպանը չի կարող բացատրություն տալ կամ հարցաքննվել որպես վկա բողոքի կապակցությամբ իր որոշման, իր մոտ գտնվող բողոքի կամ բողոքին առնչվող փաստաթղթի էության վերաբերյալ կամ դրանք տրամադրել ծանոթացման այլ կերպ, քան օրենքով նախատեսված կարգով: *Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները կարող են հարցաքննվել որպես վկա, բացառությամբ փաստաթղթի կապակցությամբ Պաշտպանի որոշման, իրենց մոտ գտնվող բողոքի կամ բողոքին առնչվող փաստաթղթի էության վերաբերյալ կամ դրանք տրամադրել ծանոթացման միայն Պաշտպանի գրավոր համաձայնությամբ:*

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Նախագծի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը համապատասխանեցնել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումներին:

16. Նախագծի «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների ոլորտում վարույթը» վերտառությամբ 21-րդ գլխի 166-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ վարչական իրավախախտման համար վարչական պատասխանատվությունը կրում է տրանսպորտային միջոցի սեփականատերը, իսկ եթե տրանսպորտային միջոցը հանդիսանում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ սեփականություն, ապա՝ համապատասխանաբար իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, եթե չի ապացուցվում, որ վարչական իրավախախտումը կատարել է այլ անձ: Վարչական իրավախախտումն այլ անձի կողմից կատարված լինելու փաստը կարող է ապացուցվել սույն օրենսգրքով սահմանված ժամկետում և կարգով տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կամ վարչական իրավախախտում կատարած անձի կողմից բողոք ներկայացնելու կամ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված հարցմանը՝ նույն մասով սահմանված կարգով պատասխանելու միջոցով:

Սակայն, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածի համաձայն՝ «Վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել գույք:»: Բացի այդ, վերոնշյալ օրենսգրքի 608-րդ հոդվածով սահմանված է, որ վարձակալության կարող են հանձնվել, ի թիվս այլնի, նաև տրանսպորտային միջոցները: Ավելին, օրենսգրքի 677-րդ հոդվածի համաձայն՝ ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով՝ վարձատուն

⁶<http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=40646>

պարտավորվում է վարձակալի նշած գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել վարձակալի կողմից որոշած վաճառողից և վճարի դիմաց հանձնել վարձակալի ժամանակավոր տիրապետմանը:

Նշվածի համատեքստում կարևոր ենք համարում անդրադառնալ ՀՀ Սահմանադրության մեկնաբանությունների գիտագործնական ժողովածուին, որտեղ ՀՀ սահմանադրության 31-րդ հոդվածին անդրադառնալիս նշվել է. «Գույքից օգտվելը կապված է տիրապետման հետ, որովհետեւ առանց դրա, որպես կանոն, օգտագործման իրավունքը չի կարող իրականացվել: Այդ իրավունքը, տիրապետման իրավունքի նման, սովորաբար պատկանում է գույքի սեփականատիրոջը: Բայց օգտագործման իրավունքը կարող է իրականացնել նաև ոչ սեփականատերը: Օրինակ, գույքային վարձակալության պայմանագրով վարձակալը ոչ միայն տիրապետում, այլև օգտագործում է ուրիշի գույքը:»:

Արդյունքում, ստացվում է մի իրավիճակ, երբ պայմանագրային հիմունքներով այլ անձանց օգտագործմանը հանձնված տրանսպորտային միջոցներով թույլ տրված վարչական իրավախախտումների վերաբերյալ որոշումները չեն կայացվում այն անձի նկատմամբ, ով փաստացի տիրապետում և օգտագործում է տրանսպորտային միջոցը և, հետևաբար, չեն ուղարկվում վերջիններին:

Մինչդեռ, երբ ճանապարհային ոստիկանության ծառայողը կանգնեցնում է տրանսպորտային միջոցը, ապա խախտման արձանագրման դեպքում վարչական պատասխանատվություն է կրում տրանսպորտային միջոցը փաստացի օգտագործողը:

Սակայն, այն դեպքում, երբ ճանապարհային երթևեկության կանոնի խախտումը հայտնաբերվել է տեսանկարահանման կամ լուսանկարահանման սարքերի միջոցով, ապա անկախ խախտում կատարած լինելու հանգամանքից պատասխանատվությունը կրում է սեփականատերը: Թեև սեփականատերը հետագայում իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապացուցելու իրավախախտումն այլ անձի կողմից կատարած լինելու փաստը, այնուամենայնիվ քաղաքացիների վրա ընկնում է լրացուցիչ բեռ:

Գործնականում շատ են դեպքերը, երբ տրանսպորտային միջոցը հանձնվում է վարձակալության մի քանի տարի ժամկետով: Այդ ժամկետի ընթացքում հնարավոր է, որ վարձակալը պարբերաբար թույլ տա ճանապարհային երթևեկության կանոնների խախտումներ: Արդյունքում, տրանսպորտային միջոցի սեփականատերը պարբերաբար կստանա վարչական իրավախախտման մասին որոշում և ստիպված կլինի յուրաքանչյուր դեպքով ապացուցել, որ խախտումը իր կողմից չի կատարվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Նախագծի 166-րդ հոդվածում ամրագրել, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ որոշում կարող է կայացվել նաև տրանսպորտային միջոցը փաստացի տիրապետողի և օգտագործողի նկատմամբ, այն դեպքում, երբ վարչական մարմին է ներկայացվել համապատասխան պայմանագիր, ինչպես նաև վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը փաստացի տիրապետողին և օգտագործողին ուղարկելու մասին սեփականատիրոջ համաձայնությունը հավաստող դիմում,

միաժամանակ նախատեսելով կայացված որոշումը անմիջապես փաստացի տիրապետողին և օգտագործողին ուղարկելու հնարավորություն:

17. Նախագծի 446-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ապակիների լուսաթափանցելիության չափի խախտմամբ կամ հողմապակին թաղանթապատված վիճակում կամ կարգի խախտմամբ վարագորապատված տրանսպորտային միջոցները վարելը՝ առաջացնում է տուգանք՝ տասը հազար դրամից երեսուն հազար դրամի չափով: Նույնաբովանդակ դրույթ սահմանված է նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123-րդ հոդվածի 4-րդ մասում:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2016 թվականի հունիսի 20-ի իր թիվ 01/13.4/1238-16 գրությամբ բարձրացրել էր Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123-րդ հոդվածի 4-րդ մասի և ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի թիվ 955-Ն որոշման թիվ 2 հավելվածի 6-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերի, ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 24-ի թիվ 289-Ն որոշման 16-րդ կետի և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի միջև առկա հնարավոր հակասությունների վերաբերյալ հարցերը:

Ի պատասխան վերոգրյալին՝ ՀՀ արդարադատության նախարարությունից հայտնել էին, որ այդ հարցերը կքննարկվեն ներկայումս շրջանառության մեջ գտնվող Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի նախագծի լրամշակման շրջանակներում:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն, որ Նախագիծը նաև ներկայացվել է կարծիքի ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին՝ առաջարկում ենք քննարկել վերոնշյալ գրությամբ բարձրացված հարցերը Նախագծի համապատասխան դրույթներով կամ հարակից փոփոխությունների արդյունքում կարգավորելու հարցը:

18. Նախագծի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապացույցները, որոնք անհրաժեշտ չեն վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի համար նշանակություն ունեցող փաստերը պարզելու համար, վերաբերելի չեն, և վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը հանում է դրանք ապացույցների կազմից:

Նախագծով կարգավորված չէ սակայն, թե վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինն ինչպես է վարվում անթույլատրելի ճանաչված ապացույցների հետ:

Նշենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի⁷ 94-րդ հոդվածի 12-րդ մասը սահմանում է, որ անթույլատրելի ճանաչված ապացույցները պահվում են վարույթի նյութերում:

Ուստի, առաջարկում ենք Նախագծում կարգավորել նաև նշված հարցը:

⁷ http://www.parliament.am/draft_docs5/K-084lrlr.pdf

19. Նախագծի 86-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի թույլ տված՝ օրենքի պահանջների կամ սույն օրենսգրքով սահմանված սկզբունքների խախտմամբ ձեռքբերված տվյալները, կարող են կասկածյալի, նրա պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջնորդությամբ օգտագործվել որպես ապացույց: Այդպիսի ապացույցը կարող է օգտագործվել միայն ի շահ տվյալ կասկածյալի:

Նշենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի⁸ 97-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանվում է, որ այն տվյալները, որոնք ստացվել են մեղադրանքի կողմի թույլ տված՝ օրենքի պահանջների խախտմամբ, կարող են մեղադրյալի, նրա պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջնորդությամբ օգտագործվել որպես ապացույց, *եթե այդ խախտմամբ չեն ուղնահարվել որևէ անձի իրավաչափ շահերը*: Այդպիսի ապացույցը կարող է օգտագործվել միայն ի շահ տվյալ մեղադրյալի:

Գտնում ենք, որ այլ անձի իրավաչափ շահերի պաշտպանության տեսակետից ելնելով նպատակահարմար է Նախագծի 86-րդ հոդվածի 6-րդ մասում «որպես ապացույց» բառերից հետո լրացնել *«եթե այդ խախտմամբ չեն ուղնահարվել որևէ անձի իրավաչափ շահերը»* բառերը:

20. Նախագծի 87-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է վարչական իրավախախտման վերաբերյալ յուրաքանչյուր գործով ապացուցման ենթակա հանգամանքները:

Սակայն, նշված հոդվածում, որպես ապացուցման ենթակա հանգամանքներ, սահմանված չեն, նրանք, որոնք անհրաժեշտ են պարզելու համար կասկածյալի առնչությունը դեպքին. անձի մեղավորությունը ենթադրյալ զանցանքը կատարելու մեջ ինչպես նաև ենթադրյալ իրավախախտմամբ պատճառված վնասը: Այնինչ, նշված հանգամանքները անհրաժեշտ են զանցակազմի առկայությունը և անձի մեղավորությունը պարզելու համար:

Նախագծի 8-րդ հոդվածը սահմանում է, որ ֆիզիկական անձը ենթակա է վարչական պատասխանատվության միայն *իր կատարած վարչական իրավախախտման համար*: Իսկ Նախագծի 20-րդ հոդվածի համաձայն՝ վարչական պատասխանատվության ենթակա է այն անձը, ով սույն օրենսգրքով սահմանված *վարչական իրավախախտումը կատարել է մեղավորությամբ*, բացառությամբ իրավաբանական անձի: Վարչական իրավախախտումը համարվում է մեղավորությամբ կատարված, եթե անձը գիտակցել է իր արարքի հակաիրավականությունը, այսինքն՝ որ այն հակասում է օրենսդրության պահանջներին կամ, թեև չի գիտակցել, բայց կարող էր գիտակցել:

Միաժամանակ, ենթակա է ապացուցման նաև ենթադրյալ իրավախախտմամբ պատճառված վնասը, քանի որ Նախագծի մի շարք հոդվածներով նախատեսված

⁸ http://www.parliament.am/draft_docs5/K-084Irlr.pdf

զանցակազմերում այն համարվում է վերջիններիս պարտադիր տարր (օրինակ՝ Նախագծի հոդվածներ 345, 346, 347 և այլն):

Պետք է նշել նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի⁹ 102-րդ հոդվածը քրեական վարույթի ընթացքում ապացուցման ենթակա փաստերի շրջանակին է դասում նաև անձի մեղավորությունը ենթադրյալ հանցանքը կատարելու մեջ, մեղադրյալի առնչությունը դեպքին. ինչպես նաև ենթադրյալ հանցագործությամբ պատճառված վնասը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք քննարկվող հազամանքները ներառել Նախագծի 87-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապացուցման ենթակա հանգամանքների շարքում:

21. Նախագծի 133-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմինը չունի վերադաս վարչական մարմին, որոշումը կարող է բողոքարկվել միայն դատական կարգով:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ որոշումը վարչական կարգով բողոքարկվում է որոշումն ընդունած վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի վերադաս վարչական մարմնին կամ *օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ իրավասու վարչական մարմնին*:

Ուստի, առաջարկում ենք Նախագծի 133-րդ հոդվածի 3-րդ մասում «վերադաս վարչական մարմին» բառերից հետո լրացնել «կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ իրավասու վարչական մարմին» բառերով:

22. Նախագծի 145-րդ հոդվածի 3-րդ մասում առաջարկում ենք «եռամսյա ժամկետի հաշվարկը» բառերը փոխարինել «սույն օրենսգրքի 146-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետի հաշվարկը» բառերով:

23. Նախագծի 148-րդ հոդվածի 4-րդ մասի 1)-ին կետի համաձայն՝ վերանայման վարույթի հարուցումը մերժվում է, եթե՝ դիմումը չի համապատասխանում սույն օրենսգրքի 147-րդ հոդվածով *սահմանված [նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով որոշումը վերանայելու դիմումին ներկայացվող]* պահանջներին.

Նշենք, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծով վերանայման դիմումին ներկայացվող պահանջները չպահպանելը դիմումի մերժման հիմք չեն հանդիսանում:

Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 204.37-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ դատական ակտի վերանայման բողոքը *վերադարձվում է, եթե՝ չեն պահպանվել սույն օրենսգրքի 204.36-րդ հոդվածով նախատեսված*

⁹ http://www.parliament.am/draft_docs5/K-084lrlr.pdf

ինոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոքի վերաբերյալ պահանջները.

Միաժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի¹⁰ 370-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ վերաքննիչ դատարանի որոշմամբ բողոքը *հինգից տասն օր ժամկետ տրամադրելով վերադարձվում է, եթե բողոքը չի համապատասխանում սույն օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված [դատական վերանայման բողոքի բովանդակության վերաբերյալ] պահանջներին:*

Ոստի, առաջարկում ենք Նախագծում սահմանել, որ սույն օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված *ինոր կամ նոր երևան եկած հանգամանքներով որոշումը վերանայելու դիմումին ներկայացվող* պահանջներին չհամապատասխանելու դեպքում դիմումը համապատասխան ժամկետ տրամադրելով վերադարձվում է՝ *այն նշված հոդվածով սահմանված պահանջներին համապատասխանեցնելու և կրկին ներկայացնելու նպատակով:*

24. Նախագծի 153-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *եթե մինչև սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված ժամկետը լրանալու օրվան նախորդող օրը անձը դիմում է որոշումը կայացրած մարմնին տուգանքի վճարումը՝ գույքային դրությամբ պայմանավորված հիմքով տարաժամկետելու խնդրանքով, ապա որոշում կայացրած մարմինը իր որոշմամբ տարաժամկետում է վճարումը դիմումի մեջ նշված ժամկետով, բայց ոչ ավելի, քան 6 ամիս:*

Նույն հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ տուգանք նշանակելու մասին որոշումը կամովին չկատարվելու դեպքում այն ենթակա է կատարման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Վերոնշյալից սակայն, պարզ չէ, թե որն է 153-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված ժամկետը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ՀՀ Սահմանադրության և օրենքների մասերին հղում կատարելիս նշվում են ակտի կրճատ անվանումը, ակտի հոդվածի հերթական համարը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հոդվածի մասի համարը, հոդվածի մասի կետի համարը:

Նույն հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ նույն կամ այլ իրավական ակտին հղումները պետք է կատարվեն հստակ և ուղղակի: Արգելվում է կատարել անորոշ հղումներ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք հստակեցնել, թե որն է Նախագծի 153-րդ հոդվածի հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը:

25. Նախագծում առկա են որոշ դրույթներ, որոնք նույնանում են արդեն իսկ գործող ոլորտային օրենքների համապատասխան կարագավորումնորի հետ: Օրինակ՝ Նախագծի «Տնտեսական մրցակցության ոլորտում վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթը»

¹⁰ http://www.parliament.am/draft_docs5/K-084lrlr.pdf

վերտառությամբ 20-րդ գլխի 163-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը կրկնում են «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթները:

Նման կրկնություններ առկա են նաև Նախագծի «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների ոլորտում վարույթը» 21-րդ գլխի և «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ գլխի միջև, ինչպես նաև Նախագծի մի շարք այլ հոդվածներում:

Բացի այդ, Նախագծի «Տնտեսական մրցակցության ոլորտում վարչական իրավախախտումները» վերտառությամբ 36-րդ գլխում ամրագրված զանցակազմերը և պատասխանատվությունը սահմանված են նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով, ինչը միևնույն արարքի համար կրկնակի պատասխանատվության սահմանում է ենթադրում:

Օրինակ՝ Նախագծի 410-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հակամրցակցային համաձայնություն կնքելը (կայացնելը, այդ համաձայնությանը մասնակցելը), եթե չի պարունակում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված վարչական իրավախախտման հատկանիշներ՝ առաջացնում է նախագգուշացում կամ տուգանք՝ հակամրցակցային համաձայնության մասնակից տնտեսվարող սուբյեկտի՝ այդ համաձայնությունը կնքելուն (կայացնելուն, դրան մասնակցելուն) նախորդող տարվա հասույթի մինչև տասը տոկոսի չափով: Նյն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հակամրցակցային համաձայնություն կնքելը (կայացնելը, այդ համաձայնությանը մասնակցելը), որը դրսևորվել է գների չիմնավորված բարձրացման միջոցով՝ առաջացնում է նախագգուշացում կամ տուգանք՝ հակամրցակցային համաձայնության մասնակից տնտեսվարող սուբյեկտի՝ այդ համաձայնությունը կնքելուն (կայացնելուն, դրան մասնակցելուն) նախորդող տարվա հասույթի մինչև տասը տոկոսի չափով:

Միաժամանակ, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) համար նշանակվող տուգանքի չափը կազմում է հինգ միլիոնից երկու հարյուր միլիոն դրամ: Հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) միջոցով գների չիմնավորված բարձրացման հետևանքով տնտեսվարող սուբյեկտի ստացած շահույթը (եկամուտը) Հանձնաժողովի որոշմամբ ենթակա է գանձման Հայաստանի հանրապետության պետական բյուջե:

Նշենք նաև, որ Նախագծի որոշ դրույթներ միևնույն հարցի վերաբերյալ նախատեսում են ոլորտային օրենքներով սահմանված դրույթներից տարբերվող կարգավորումներ:

Օրինակ՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարտադիր ապահովագրության ոլորտում վարույթը» վերտառությամբ 22-րդ գլխի 169-րդ կետի 4-րդ մասով սահմանվում է, որ վարչական տույժի ենթարկված անձն իրավունք ունի *չվճարելու* սույն օրենսգրքի 466-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների համար նշանակված տուգանքը, եթե վարչական տույժ նշանակելու մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 30-օրյա ժամկետում, ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական կառավարման լիազոր մարմին է ներկայացնում մինչև ենթադրյալ վարչական իրավախախտման օրը կնքված և համապատասխան ժամանակահատվածի համար գործող ԱՊՊԱ պայմանագիրը

Այնինչ՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 52.1-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ վարչական ակտի հասցեատերն իրավունք ունի *չվճարելու կամ պակաս վճարելու* նշանակված տուգանքը, եթե վարչական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ 30-օրյա ժամկետում, ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական կառավարման լիազոր մարմին է ներկայացնում մինչև ենթադրյալ իրավախախտման օրը կնքված և համապատասխան ժամանակահատվածի համար գործող ԱՊՊԱ պայմանագիր:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագծում սահմանված չեն անցումային դրույթներ, որոնք նախատեսում են ուժը կորցրած ճանաչել ոլորտային օրենքների միանման կարգավորումները, ինչպես նաև Նախագծին կցված չեն հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծեր՝ առաջարկում ենք կրկնողություններից խուսափելու համար խմբագրել Նախագիծը կամ համապատասխան իրավական ակտերը:

26. Նախագծի 22-րդ գլխի վերնագիրն է «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարտադիր ապահովագրության ոլորտում վարույթը»:

Առաջարկում ենք նշված գլխի վերնագրում «բխող» բառից հետո լրացնել «պատասխանատվության» բառը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ